**Արձանագրություն N 4**
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14 մայիսի 2019թ
ժամը 14:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Մուրադյանը
անդամներ՝ Հ.Մարգարյանը, Գ.Դանիելյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին**

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ Հրավերով սահմանված ժամկետում «Սմարթլայն» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

բ/ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

գ/ Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց. «Սմարթլայն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների համար:

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

## II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Մ. Մուրադյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմաններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Մուրադյան

անդամներ՝ _____ Հ.Մարգարյան

_____ Գ.Դանիելյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան